ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2023 թվականի N 55-Ա

ՀԱՄԱՅՆԱՔՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի « Հայաստանի Հանարապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» 3496-Ա հրամանը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոնների անձնագրերը՝ համաձայն N1-74 հավելվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հունվարի 25
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2023 թվականի N 56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՎԱՐԻ 20-Ի N45-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայատանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք գյուղ Մեծավան 06-074-0034-0012 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականության իրավունքը ճանաչելու մասին» N 45-Ա որոշման 1-ին և 3-րդ կետերի «Աննա Աշոտի» բառերից հետո հանել « Աննա Աշոտի» բառերը :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հունվարի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2023 թվականի N 57-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՌՈՒԶԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌԱԴԻԿԻ»-ԻՆ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Ռուզաննա Վարտանյան Ռադիկի» 2023 թվականի հունվարի 25-ի N02 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45 -րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին»N 30-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 151 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Ռուզաննա Վարտանյան Ռադիկի» հայտը բավարարել և նրան տալ 2023 թվականի համար հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հունվարի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2023 թվականի N 58-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետը, 50-րդ, 51-րդ, 60-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 30-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Իվան Ալեքսեև Միխաիլի, Պրասկովյա Ալեքսեևա Պավելի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական՝ 14122022-06-0029 տրված՝ (14.12.2022-ին) ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Պրիվոլնոյե, հողամաս հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Պրիվոլնոյե, 6-րդ փողոց թիվ 50 (փոստային դասիչ՝ 2115) հասցեն:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հունվարի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2023 թվականի N 59-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 30-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Մելիկո Գրիգորի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման սեփականության վկայական՝ 1687861 տրված՝ 08. 11. 2005-ին) ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր,Կիրովի փողոց, տուն թիվ 9 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր Երևանյան փողոց, բնակելի տուն թիվ 9 (փոստային դասիչ՝2101) հասցեն:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ բնակելի տան վերահասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հունվարի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, գ. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2023 թվականի N 60-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՊՐԻՎՈԼՆՈՅԵ 06-092-0022-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վերա Իվանի Ռեշետովայի (ն.թ.՝014379689, տրված՝ 08/02/2022թ.) կողմից դիմումը (մուտք՝ 19 . 01 . 2023-ի ՄԴ-67-23), ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, (գրանցամատյան 1842, 1844), 09.12.2022թ . տրված տնտեսական գրքից քաղվածքը, «ԳՈՒԳԱՐԱԾ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով, կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը՝ 1940թ.-ին

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Վերա Իվանի Ռեշետովայի սեփականության իրավունքը Տաշիր համայնք, գյուղ Պրիվոլնոյե 06-092-0022-0001 կադաստրային ծածկագրում գտնվող 0,143485 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «ԳՈՒԳԱՐԱԾ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

3.Օրենքի ուժով ճանաչել Վերա Իվանի Ռեշետովայի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք գյուղ Պրիվոլնոյե 06-092-0022-0001 կադաստրային ծածկագրով 0,143485 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ:

4.Տնատիրության տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Պրիվոլնոյե, 1-ին փողոց, թիվ 78 բնակելի տուն (փոստային դասիչ՝21-15)

5.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հունվարի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2023 թվականի N 61-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՌՈՒԶԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌԱԴԻԿԻ»-ԻՆ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Ռուզաննա Վարտանյան Ռադիկի» 2023 թվականի հունվարի 25-ի N04 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45 -րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին»N 30-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 151 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Ռուզաննա Վարտանյան Ռադիկի» հայտը բավարարել և նրան տալ 2023 թվականի համար հեղուկացված նավթային գազի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հունվարի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2023 թվականի N 62-Ա

«ՎԵՍՆԱ» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վեսնա» արտադրական կոոպերատիվի տնօրեն Լյովա Սուքիասյանի 2023 թվականի հունվարի 25-ի N3 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները ու դրույքաչափերը սահմանելու մասին»N 30-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թաղամաս 1 հասցեում գործող «Վեսնա» արտադրական կոոպերատիվի տնօրեն Լյովա Սուքիասյանի հայտը բավարարել և տալ 2023 թվականի համար սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություն:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հունվարի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվարի 2023 թվականի N 63-Ա

ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ, ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 142 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿԻ, ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդգար Ռոբերտի Բարսեղյանի (անձնագիր՝ 005985874 տրված՝ 04.07.2017-ին) դիմումը (մուտք՝ 16.01.2023-ի ՄԴ-44-23), անշարժ գույքի սեփականության իրավունքի թիվ 01062017-06-0027 վկայականը, «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի, 8-րդ, 9-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի 14-Ն որոշումով և հիմք ընդունելով «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, կադաստրի կոմիտեում հաշվառված թիվ 2023EJP44M ծածկագիրը Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետը, 50-րդ, 60-րդ և 62-րդ կետերը, և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 93-Ն որոշումով՝ նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 142 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0081-0005) Էդգար Ռոբերտի Բարսեղյանի կողմից բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,08134 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 132,98քմ մակերեսով տնտեսական սենյակը, 2,11քմ մակերեսով պարիսպը, 2,28քմ մակերեսով պարիսպը, 2,12քմ մակերեսով պարիսպը, 15,58քմ մակերեսով աստիճանահարթակը համաձայն «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի

2.Հողամասի սահմանները որոշվում են՝ համաձայն «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3.Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացնող Էդգար Ռոբերտի Բարսեղյանին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել (հաշվեհամար՝ 900 275 081 124) ինքնակամ կառույցի օրինականացման համար սահմանված վճարը՝
1) Տնտեսական սենյակի համար 136704 (հարյուր երեսունվեց հազար յոթ հարյուր չորս) ՀՀ դրամ:
2)Պարիսպ 2,11քմ. 2170 (երկու հազար հարյուր յոթանասուն) դրամ:
3)Պարիսպ 2,28քմ. 2344 (երկու հազար երեք հարյուր քառասունչորս) դրամ:
4)Պարիսպ 2,12քմ. 2180 (երկու հազար հարյուր ութանասուն) դրամ:
5)Աստիճանահարթակ 15,58քմ. 16017 (տասնվեց հազար տասնյոթ) դրամ:

4. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Հողամասին ՀՀ Լոռու մարզ, ք.Տաշիր, Երևանյան փողոց 4 թաղամաս 142 բնակելի տուն հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք.Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 142 բնակելի տուն հասցեն (փոստային դասիչ 2101):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2023թ. հունվարի 27
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվարի 2023 թվականի N 64-Ա

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԹԵԼՄԱՆԻ ՌԱՖԱԵԼՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N93-Ն որոշման հավելված 1-ի 1-ին կետով, հիմք ընդունելով քաղաքացի Արմենուհի Թելմանի Ռաֆաելյանի դիմումը (մուտք՝ 07.06.2022-ի ՄԴ295-22)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արմենուհի Թելմանի Ռաֆաելյանին տալ քարե պարիսպի և ծածկարանի կառուցման լրամշակման շինարարության թույլտվություն:

2.Արմենուհի Թելմանի Ռաֆաելյանին՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081207 հաշվեհամարին մուծել 30000 (երեսուն հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3.Արմենուհի Թելմանի Ռաֆաելյանը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին ներկայացնել 2-5 ձևի տեղեկանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ * РА ЛОРИ МАРЗ ТАШИР МУНИЦИПАЛИТЕТ * REPUBLIC OF ARMENIA LORI REGION TASHIR MUNICIPALITY * 06966995

2023թ. հունվարի 27
ք.Տաշիր